

Աուդիտորական եզրակացություն

«Ալմաստ» ԲԲԸ
մասնակիցներին

2009թ դեկտեմբերի 31-ի ավարտվող տարվա համար

Համաձայն կնքված պայմանագրի, մեր կողմից իրականացվել է «Ալմաստ» ԲԲԸ-ի 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունների աուդիտ աուդիտի ազգային ստանդարտներին համապատասխան: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալների և բացահայտումների հիմքերի հետազոտում, ֆինանսական հաշվետվությունների կազմմանը կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, կազմակերպության կողմից հաշվարկված հաշվապահական եական արժեքների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարությունը: Աուդիտը չի բացահայտում կազմակերպության ներքին վերահսկողության բոլոր թերությունները, հետևաբար նա չի արտացոլում նման բոլոր դեպքերը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մեր կողմից ընտրանքային կարգով աուդիտի է ենթարկվել կազմակերպության 2009թ. գործունեությունը հաստատող այն սկզբնական փաստաթղթերի հաշվեքննումն ու համապատասխան ձևակերպումների ճշտությունը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվությունների տվյալները: Մենք գտնում ենք, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար հիմք է տալիս հետևյալ եզրահանգման համար:

Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում չկան եական խախտումներ, ֆինանսական հաշվետվությունները տալիս են «Ալմաստ» ԲԲԸ-ի 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների մասին ճշմարիտ և իրական պատկերը և համապատասխանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Տնօրեն/Աուդիտոր
Վարդան Նիկողոսյան

աուդիտոր
Նունե Ալեքսանյան

